



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ № 14Ա

ԱԼԵՔՍԵՅ ՍՈՒՔՈՅԱՆԻՆ ԲԱՇԽՎԵԼԻՔ ԳՈՐԾԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏՈԿՈՍԱԶԱՓ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ալեքսեյ Սուքոյանի դիմումը և ղեկավարվելով ՀՀ դատական օրենսգրքի 21.2-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ալեքսեյ Սուքոյանի համար սահմանել բաշխվելիք գործերի առանձին տոկոսաչափ՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2017թ. դեկտեմբերի 29-ը ներառյալ՝

- ա) քաղաքացիական գործերով՝ 10% տոկոսաչափ,
- բ) սնանկության գործերով՝ 100% տոկոսաչափ,
- գ) արբիտրաժային գործերով՝ 100% տոկոսաչափ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հուլիսի 19-ից:

**Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահ**

2017թ. հուլիսի 18
ք. Երևան

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ